

կտրում է և շինում միբուք ու բեխեր և դրանով խաբում Բէլի ձիաւորներին: Բայց վերջ ի վերջոյ նրա խորամանկութիւնը բացւում է և կտրիճ հովուհին ստիպուած է լինում զէնքի դիմել իր պատիւը պաշտպանելու համար: Այդ ինքնապաշտպանութեան համար նրան օգնում են իր երկու հաւատարիմ չները, «որոնք հայր Աբրահամի չների ցեղից էին», և ձեռնասուն առիւծն ու ինձը: Լուսիկն իմանում է իր սիրածի վտանգաւոր գրութեան մասին և օգնութեան է հասնում: Կռուի ժամանակ ինքը Սետն իր ձեռքով սպանում է իր ախոյեան Բէլին: Այդպէս ահա կատարւում է ճակատագրի վճիռը և Լուսիկը պսակւում է Սետի հետ:

Ահա կարճ բովանդակութիւնը այս, երկի, աղաւաղած դիւցազններգութեան, որ «փոքր ինչ կոկուած» և գրական լեզուի վերածած գրի է անցկացրել պ. Հայկունին: Նա «երկար երգերը» (եր. 48) տեղ-տեղ դուրս է ձգել: Մենք կարծում ենք, որ աւելի մեծ ծառայութիւն արած կը լինէր պ. Հայկունին թէ մեր գրականութեան և թէ ազգագրութեան, եթէ «Մինաս Բարբի» պատմածը նոյնութեամբ գրի առնէր և միայն ծանօթութիւնների միջոցով զիւրացնէր այդ ժողովրդական վէպի ընթերցանութիւնը: Գուցէ հէնց «փոքր ինչ կոկուած» շնորհիւ է, որ պատմաւածքի կիսը տեղ-տեղ ընդհատւում է: Սակայն լոյս տեսած ձեռք էլ ժողովրդական այս վէպը արժանի է մեծ ուշադրութեան. մեր բանաստեղծները կարող են համեմատել իրանց դժգոյն մուսան մեր ժողովրդի առողջ ստեղծագործութեան հետ:

Լ. Ս.

4) ԱՐԱՄ ԶԱՐԸԳ. Բանաստեղծութիւններ. Վնեստիկ. 1900 թ.
գինը 1 ռ.

Աստուածային կրակ ունեցող անգրագէտ մարդն էլ կարող է իր հոգու յուզմունքները բանաստեղծօրէն արտայայտել: Դրան ապացոյց մեր աշըղներէից շատերը, որոնք դժբախտաբար թուրքերէն են երգել:

Ժողովրդական շատ գեղեցիկ երգեր հէնց այդպիսի անհատների ստեղծագործութիւններ են: Այդպիսի հեղինակները մոռացւում են, բայց նրանց հոգին իրանց յօրինած երգերում դեռ անքրում է, որովհետեւ ժողովուրդը նրանց մէջ արձագանք է գտնում իր վշտին և ուրախութեան, իր ձգտումներին ու յոյսերին: Բանաստեղծը կարող է մինչև անգամ միայն երգել իր անհատական զգացմունքները, իր հոգու արամագործութիւնները:

Բայց երբ այդ անհատական յոյզերն բանաստեղծօրէն են ձեւակերպուած—նրանք դառնում են ընդհանուրի սեփականութիւն, որովհետեւ ամեն մարդ ունենում է նոյն տեսակ զգացումներ և տրամադրութիւններ: Մենք ունենք այժմ շատ երգեր, որոնք մտել են գրականութիւնից կեանքի մէջ և ամեն տեղ երգուելով որոշ տրամադրութիւն են առաջացնում լսողներին մէջ, վարակում են նրանց բանաստեղծի արտայայտած զգացմունքներով: Այդպէս ահա լաւ քնարերգութիւնը պէտք է հաշորդի իր տրամադրութիւնը ընթերցողին, այդ նրա աջողութեան ամենալաւ չափն է: Բայց կարդալով պ. Արամ Չարըզի սուկի քան 230 ոտանաւորները, դժուարանում ենք ցոյց տալ բոլորովին աջողութեանը: Իւրաքանչիւրը ունի մի որ և է պակասութիւն. մէկի լեզուն է սոսկալի աներաժշտական, օրինակ.

Յանձնենք մեղ անլախ մրբիկներին,

Ու չը սարսափինք արիւն-արցունքից.

Այնտեղ փրթթում է մի վայելք վերին,

Որով Աստուած իսկ մեզի նախանձեց:

Կամ՝ հեղինակի ցանկութիւններն ու միաբն են վայրենի ու տարօրինակ. պ. Չարըզը, օրինակ, ուզում է անպատճառ մարդկութիւնը փրկել «լուսնի վրայ խաչուելով» և յետոյ լուսնի վրայից երկրի վրայ իբրեւ դիակ դնողուելով (եր. 19): Կամ՝ «բանաստեղծը» դէպի «սիրուն աղջիկներն» արտայայտում է այնպիսի սէր, որ հեռու է վայելուչ լինելուց, օրինակ.

Սիրուն աղջիկ, հասիր, հասիր,

Տո՛ւր սըրտիդ կաթն ինձ ծըծել...

Աբի սեղմենք սրտերը մեր

Իբար ամուր ու երկար...

Սիրուն աղջիկ, շուտն՛վ արի,

Անօգուտ են չոր, վառարան...

Աբի կրծքիս վրայ նըստիբ,

Որի տակ ծով սիրտրս ուռչի և այլն:

Կամ, վերջապէս, պ. Չարըզը ենթարկուելով դեկադենտների ազդեցութեան, այսպիսի անհեթեթ համեմատութիւններ է անում. «հոգին խիստ կապտում է», «երազները թիավարում են», «խաւարը լուռ խոկում է» եւ այլն:

Եթէ ճոխ լեզու և գրականութիւն ունեցող եւրոպական ազգերը, կշտացած փարթամութիւնից, իրանց հիւանդոտ նոր զգացմունքներին ու նոր յոյզերին համապատասխան ոճեր են որոնում, եթէ եւրոպական դեկատենտները կարծում են, որ «դէղին ցանկութիւն» կամ «ճնարի սիւսակ ձայն» բառերի մէջ մի ինչ որ միասիւքական նրբութիւն կայ թագնուած, եթէ եւրո-

պացի հսկայ բանաստեղծների կողքին դուրս են գալիս ճիշակապէս լեզուով երգող գաճաճ ղեկագնացներ, այդ դեռ չէ նշանակում, որ մենք էլ պէտք է խեղկատակների բոժոժներով դարձարուած տարօրինակ զգեստներ հագցնենք բանաստեղծութիւններով աղքատ մեր լեզուին. այդ դեռ չէ նշանակում, որ մենք էլ, դեռ չը կարողանալով չնորքով արտայայտել մեր ամենապարզ զգացմունքները, չը կարողանալով բանաստեղծօրէն նկարագրել բնութիւնը, պէտք է սաւառներ ղեկագնացների գրառանցական աշխարհներում: Ամեն քայլափոխում արուեստականութիւններ մտցնելով, ինչպէս, օրինակ, «Վերջալոյսի», «Կէս գիշերի», «Հաննայի» և դրանց նման գրուածքների մէջ, պ. Չաբրըրը տաժանելի է դարձնում իր ոտանաւորների ընթերցանութիւնը: Այդ կտորները կարդալով, մարդ էլի փառք է տալիս նրա «Հայրենի փնջիկին», կամ «Շողու ցօղին», որովհետեւ դրանցից մէկում նկարագրուած են գաղթական հայերի տառապանքները, թշուառ մայրերի արտասուքը, որերի տանջանքները, իսկ միւսում՝ զարնան զեղեցկութիւնները, թէև դրանցից ոչ մէկը այնպէս չէ գրած, որ խոր տպաւորութիւն թողնի, տրամադրութիւն առաջացնի և ժողովրդականութիւն ստանայ՝ երաժշտականութիւնից և պլաստիկականութիւնից զուրկ լինելու պատճառով, բայց գոնէ չեն նկատուում «երկնքից վեր» և «անհունութիւնից անդին» թռչելու ջանքեր...

Սակայն... ճաշակի բան է. դուցէ մի ուրիշը գտնէ խոր զգացմունք այսպիսի «բանաստեղծութեան» մէջ.

Ես դալկութիւն սիրեցի.

Ալ վարդի տեղ ես նրան

Ճակտիս պըսակ ընտրեցի.

Ես դալկութիւն սիրեցի.

Խոր տանջանքի այդ շողով

Սիրտս ու հոգիս լեցուցի.

Ես դալկութիւն սիրեցի

Դալկութիւն (դեղնութիւն) սիրելը հիւանդոտ ճաշակի արդիւնք է...

Լ. Ս.

5) Г. М. ТУМАНОВЪ. Характеристики и воспоминания. Тифлисъ, 1901.
Цѣна 50 коп.

Դամբանական և յօբերեանական ճառերում ընդունուած չէ խօսել գործիչի բացասական կողմերի մասին, ուստի հատկանշաւի է որ այս գրքույկում, որի մէջ ամփոփուած են Կովկասի դա-